



«ԴԻԼԻՋԱՆ» ազգային պարկում» սպասվում են խստացումներ

Էկոլոգիական մտածողության պատշաճ մակարդակի բացակայության պատճառով մեզանում վերջին տարիներին սրվել են բնապահպանական մի շարք խնդիրներ, մասնավորապես, մեծացել է ճնշումը անտառների վրա:

Արդեն քանի ամիս բնապահպանության նախարարությունում նպատակային աշխատանքներ են տարվում իրավիճակը շտկելու ուղղությամբ: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում անցկացվել են մի շարք խորհրդակցություններ և աշխատառժի վերափոխման խնդիր է դրվել կոլեկտիվի առջև: Միաժամանակ մեծածավալ ստուգումներ են անցկացվել անտառային տարածքներում, որոնց արդյունքում հայտնաբերվել են ապօրինի հատված հազարավոր ծառեր:

Խնդիրը զեկուցվել է հանրապետության նախագահին: Նախագահի կողմից բնապահպանության նախարարությանը և մարզային պետական մյուս կառույցներին տրվել են խիստ հանձնարականներ՝ կարճ ժամկետում վերացնել թերացումները և ապահովել ազգային պարկի պատ-

շաճ պահպանությունը:

Հունիսի 13-ին Բնապահպանության նախարարությունում կայացել է խորհրդակցություն նվիրված ազգային պարկի խնդիրներին, որի ժամանակ տեղայնացվել են ՀՀ Նախագահի կողմից տրված հանձնարարականները, ինչպես նաև՝ քննարկվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված առաջարկները:

Նախարարը քննարկման մասնակիցներին տեղեկացրել է, որ ստուգումներ են իրականացվել «Դիլիջան» ազգային պարկի» տարածքի մոտ 60 տոկոսում (ստուգումն ընդգրկել է 2014 թ. Օգոստոսի 26-ից մինչև 2017 թվականի մայիսի 30-ը ընկած ժամանակահատվածը), հայտնաբերվել է ապօրինի հատված ավելի քան 6300 ծառ: Ապօրինի հատված 1820 ծառի վերաբերյալ ազգային պարկը ժամանակին կազմել է վարչական ակտեր և դրանք ներկայացրել իրավապահ մարմիններին:

• «Դիլիջան» ազգային դարկում» սղասվում են խստացումներ

Սկիզբը էջ 1 /

Ազգային պարկում տիրող վիճակը շտկելու նպատակով Արծվիկ Մինասյանը խորհրդակցության մասնակից պատասխանատուներին տվել է մի շարք հանձնարարականներ, մասնավորապես՝

- ստուգումների արդյունքների ամբողջական փաթեթը ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազությունը,

- ուժեղացնել Բնության հատուկ պահպանվող, մասնավորապես՝ «Դիլիջան» ազգային նպարկի» պահպանությունը,

- կարճ ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և «ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ՀՀ բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը («Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում պահնորդական ծառայության միջոցով պահպանության փորձնական ծրագրի իրականացման ֆինանսավորման նպատակով),

- ուսումնասիրել «Դիլիջան» ԱՊ աշխատակիցների աշխատավարձերի, սոցիալական ապահովագրության, կյանքի ապահովագրության հարցերը, մշակել և ներկայացնել դրանց համար անհրաժեշտ ֆինանսավորման նախահաշիվը,

- «Դիլիջան» ԱՊ պահպանության տեսանկյունից բարձր ռիսկային տեղամասերի (Հաղարծին, Շամախյան, Դիլիջան) 24 ժամյա պահպանությունը փորձնական ծրագրով փոխանցել մասնավոր պահնորդական կազմակերպությանը, որը պետք է ապահովի շարժական և հենակետային պահնորդական խմբեր, իրականացնի շրջայցեր, նյութական պատասխանատվություն կրի այն վնասի համար, որը կպատճառվի ազգային պարկին՝ իր կողմից անհրաժեշտ պահպանության և անվտանգության միջոցառումները չիրականացնելու հետևանքով:

- վերանայել «Դիլիջան» ազգային պարկի» կադրային քաղաքականությունը՝ սահմանելով մասնագիտական պահանջներ և անհրաժեշտության դեպքում նախատեսելով պարտադիր վերապատրաստման ծրագրեր,

- վերանայել «Դիլիջան» ազգային պարկի» կառավարման մարմինների (գործադիր մարմին, խորհուրդ, լիազոր մարմին) լիազորությունները, ազգային պարկի աշխատանքների կազմակերպման սխեմաները,

- կազմակերպել իրավապահ մարմինների, ազգային նպարկի, տեսչական մարմնի և պահպանությունն իրականացնող կազմակերպության հետ իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ,

- «Դիլիջան» ազգային պարկի» կառավարման խորհրդի պահպանման դեպքում ուսումնասիրել դրանում ՀԿ-ների, ՋԼՄ-ների և հարակից համայնքների ներկայացուցիչների ներգրավման հարցը,

- վերանայել «անտառային տոմս»-ի տրամադրման կարգը, ուսումնասիրել և լուծում տալ «անտառային տոմս»-ի մարման և վերահսկման մեխանիզմներին,

- մշակել և ներկայացնել առաջարկություն անտառից փայտանյութի դուրսբերման իրավունքի վերաբերյալ,

- ներկայացնել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ,

- մշակել և ներկայացնել այն սարքավորումների ցանկը (դրանց արժեքները, գնման հնարավորությունները), որոնք թույլ կտան առավել արդիական տեխնիկական միջոցներով կազմակերպել «Դիլիջան» ԱՊ տարածքների հսկողությունը (անօդաչու թռչող սարքերի կիրառում, արբանյակային քարտեզների միջոցով առկա վիճակի ուսումնասիրում, տեսախցիկների և ազդարարման զգայուն սարքերի տեղադրում և այլն),

- միջազգային կազմակերպությունների հետ վարել բանակցություններ, վերը նշված տեխնիկական սարքավորումները ձեռքբերելու ուղղությամբ,

- «Դիլիջան» ԱՊ-ի համար մշակել և ներդնել պահպանվող տարածքների աջակցման ծրագրեր,

- մեկամսյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ, որոնց միջոցով հնարավորություն կստեղծվի բուսական և կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարները ողջամիտ չափով պահպանվող տարածքների պատասխանատու կազմակերպություններին վերադարձնելու և աշխատակիցներին խրախուսելու համար,

- մշակել և ներկայացնել «Դիլիջան» ԱՊ-ի կառավարման նոր պլանի տեխնիկական առաջադրանքը,

- մշակել ԴիլիջանԱՊ-ի հարակից համայնքների բնակիչների հետ տարվելիք բացատրական աշխատանքների սխեմա և նրանց կողմնակի անտառօգտագործման աշխատանքների մեջ ներգրավելու հնարավորություններ,

- մշակել փայտանյութի հանրապետություն ներմուծման խթանման օրենսդրական առաջարկներ,

- նախաձեռնել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանխարգելիչ գործառնություններն ուժեղացնող, տեխնիկական զինվածությունը և մասնագիտական բարձր կարողություններն ապահովող անհրաժեշտ իրավական և այլ բնույթի փոփոխություններ:

Հաջորդ օրը, հուլիսի 14-ին, նախարար Արծվիկ Մինասյանը խորհրդակցություն անցկացրեց «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում, որին հրավիրված էր նաև Տավուշի մարզի դատախազ Վիկտոր Գրիգորյանը:

Նախարար Արծվիկ Մինասյանն իր գնահատականը տվեց ազգային պարկի գործունեության վերբերյալ, ապա տեղեկացրեց, որ ազգային նպարկի տնօրենն ազատվել է աշխատանքից իր դիմումի համաձայն, հիմնարկում իրականացվելու է կադրային նոր քաղաքականություն, որպեսզի հնարավոր լինի ապահովել անտառի լիարժեք պահպանություն: Համակարգի գործունեության որակն արմատապես փոխվելու է, թերացողները, ապօրինի անտառահատողների հետ համագործակցողները, փայտի առևտուրը հարստացման աղբյուր ընկալողները ոչ միայն տեղ չափտի ունենան համակարգում, այլև պիտի ամենախիստ պատասխանատվության ենթարկվեն:

• «Դիլիջան» ազգային դարկում» սղասվում են խստացումներ

Սկիզբը էջ 1 /

Այնուհետև, տեղամասերի պատասխանատուները, անտառապահները ներկայացրին բնականոն աշխատանք կազմակերպելուն խանգարող միջարք դժվարություններ: Նախարարը ԱՊ ղեկավարությանը հանձնարարեց վերացնել դրանք: Հանձնարարվեց նաև գույքագրել անտառում առկա թափուկը, որպեսզի այն օրենքով սահմանված կարգով տրամադրելով բնակչությանը՝ մեղմվի անտառի վրա ճնշումը:

Եղավ առաջարկ օրենսդրական փոփոխություններով

խստացնել ապօրինի ծառահատման համար նախատեսվող պատիժը:

Տավուշի մարզի դատախազ Վ. Գրիգորյանն իր խոսքում կարևորեց անտառների պահպանության նշանակությունը և իրավապահ համակարգի պատրաստակամությանը հայտնեց՝ համագործակցել ապօրինի ծառահատումների դեմ պայքարելու գործում:

ՀՀ Բնապահպանության նախարարության մամուլի ծառայություն

Խորհուրդը ուղիներ է որոնում ուժեղացնելու ավիացիայի թռիչքների անվտանգությունը



Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ անդամ երկրների միջպետական հիդրոօդերևութաբանական խորհրդի աշխատանքային խմբի 4-րդ, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի, ներառյալ Միջին Ասիայի փորձագետների խմբի միասնական խորհրդակցություն՝ նվիրված քաղաքացիական ավիացիայի թռիչքների անվտանգության ապահովման հարցերին, որին մասնակցում էին 12 երկրներից 59 պատվիրակություն /ԱՊՀ երկրներ/ և ՀՀ բնապահպանության նախարարության «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ տնօրենի Ժ/պ՝ Ա.Սովսիսյանը և փոխտնօրեն Թ.Հայրապետյանը: Սեմինարը կազմակերպվել էր Քաղաքացիական Ավիացիայի Միջազգային Կազմակերպության, (ICAO), Օդերևութաբանության Միջազգային Կազմակերպության (WMO) և ՌԴ «Ռուսհիդրոնետ Ավիամետտելեկոմ» պետական ընկերության կողմից: Սեմինարի ընթացքում ելույթներով հանդես են եկել ICAO-ի, WMO-ի, ինչպես նաև ԱՊՀ երկրների մասնագետներն ու փորձագետները՝ ներկայացնելով ԱՊՀ երկրներում քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկմանն առնչվող հարցեր և առաջարկել համապատասխան լուծումներ, մասնավորապես. - Ստեղծել SIGMET հաղորդագրությունների խորհրդատվական կենտրոն, ինչպես նաև ձեռնարկել համապատասխան քայլեր SIGMET հաղորդագրություն-

ում ներառված սառցակալման, փոշե և ավազե փոթրիկների, տորբուլենտականության հետ կապված թերությունները վերացնելու ուղղությամբ: Քննարկվել են նաև ԱՊՀ երկրների միջև SIGMET տեղեկատվության փոխանակման և միասնական տրամադրման հնարավորությունների խնդիրներ: Ներկայում SIGMET-ի միասնական տրամադրման հարցում գործում է համաձայնություն Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետությունների միջև: Սեմինարի ավարտին, քաղաքացիական ավիացիայի թռիչքների անվտանգությունն օդերևութաբանական սպասարկման տեսանկյունից առավել անվտանգ դարձնելու համար մի շարք երկրների, այդ թվում նաև Հայաստանը ներկայացնող մասնակիցների կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ: «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ կողմից քաղաքացիական ավիացիայի համար մշակվող և տրամադրվող օդերևութաբանական տեղեկատվության արդարացվածությունը կազմում է 92.5%, այս ցուցանիշը բարձր է տարածաշրջանի մի շարք երկրների ցուցանիշներից: Քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկմանն առնչվող խնդիրների պարզաբանման և լուծման նպատակով առաջարկվել է առավել հաճախակի դարձնել մամուլային քննարկումները:

Տարածաշրջանում քաղցրահամ ջրերի սակավության ֆոնին Արաքս գետի ջրերը Իրանի համար մեծ պարզել են



Գործնական հանդիպում Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակության հետ

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության Միջկառավարական հանձնաժողովի 14-րդ համատեղ նիստի Փոխընթացման հուշագրի կատարման ընթացքը վերահսկող հանձնախմբի նիստի շրջանակներում Հայաստան ժամանած Ալիռեզա Դաեմիի հետ քննարկվել են բնապահպանության ոլորտում կարճաժամկետ և երկարաժամկետ համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր՝ մասնավորապես անդրադարձ կատարելով Փոխընթացման հուշագրի կետերով նախանշված գործողություններին և դրանց իրականացման ժամկետներին: Փաստաթղթի շրջանակներում իրանական կողմը բարձրաձայնել է Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից Արաքս գետի աղտոտման խնդիրը և կեղտաջրերի շրջանառու փակ համակարգի ներդրման ժամանակացույցին վերաբերվող հարցեր:

ՀՀ բնապահպանության առաջին փոխնախարար Երիկ Գրիգորյանը նշել է, որ ջրային ռեսուրսների կառավարման հարցերը չեն կարող սահմանափակվել աղտոտման մեկ աղբյուրով՝ միևնույն ժամանակ արձանագրելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում ձևավորվող ջրային ռեսուրսների մեծ մասը թափվում է Արաքս գետ, որը հարևան երկր-

ների կողմից օգտագործվում է ոռոգման և այլ նպատակներով, ինչը խիստ ուշագրավ է տարածաշրջանում քաղցրահամ ջրի սակավության ֆոնին: Վկայակոչելով ջրի որակի մոնիթորինգի տվյալները՝ Երիկ Գրիգորյանը կարևորեց նաև մոնիթորինգային աշխատանքային խմբի կողմից Հայաստանին ոչ սահմանակից հատվածում աղտոտման աղբյուրների և ջրառի ծավալների ուսումնասիրության խնդիրը: Հանդիպման ընթացքում կողմերը անդրադարձան նաև էկոհամակարգային ծառայությունների միջազգային ընդունված փորձին, ինչպես նաև՝ քննարկեցին Փոխընթացման հուշագրով նախատեսված գործողություններն իրականացման ընթացքում միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավման հնարավորությունները և այլ հարցեր: Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Ալիռեզա Դաեմին կարևորել է ընդունված ծրագրի իրականացումը և Հայկական պատվիրակությանը հրավիրել է Իրանի Իսլամական Հանրապետություն՝ իրանական փորձը ուսումնասիրելու, որի հիման վրա հետագայում առավել իրատեսորեն կմշակվի փակ համակարգի ներդրման տեխնիկական, ֆինանսավորման և ժամկետների հարցերը:

Ապօրինի ծառահատողի ձեռքը բռնելու ենք, այլ հույսեր չփայփայեք...

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի աշխատակիցների, ՃՈ և ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի ծառայողների կողմից համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքում անշարժ պահակակետերում ծառայություն կատարելու ժամանակ ստուգման է ենթարկվել փայտանյութ տեղափոխող 17

տրանսպորտային միջոց, որից ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի հատուկ պահպանվող տարածք է տեղափոխվել 8 ավտոմեքենա? համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով: Ընդհանուր առմամբ, հաշվարկվել է 13 խմ վառելափայտ, 2 խմ շինափայտ, 4 խմ փայտի հաշվարկով՝ 80 պարկ փայտածուխ: Հաշվարկվում է փայտանյութի ապօրինի տեղափոխման հետևանքով բնությանը պատճառված վնասի չափը: Գործընթացը գտնվում է նաև ՀՀ Տավուշի մարզի դատախազի հսկողության տակ: Ապօրինի ծառահատումների դեմ պայքարելու խստացված միջոցառումները շարունակվում են: Հիշեցնենք, որ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորությամբ անցկացվել էր խորհրդակցություն և աշխատատեղի վերափոխման խնդիր էր դրվել կոլեկտիվի առջև:

Իշխան ձկան պաշարների վերականգման եւ ձկնաբուծության զարգացման նոր մոդել



Նուլիսի 13-ի ՀՀ կառավարության նիստում ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ներկայացրել է ոլորտին վերաբերող հարցեր: Գործադրի որոշմամբ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտու տարածքում «Սևանի իշխան» փակ բաժնետիրական ընկերությանը լծում իշխանի պաշարների վերականգման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով առանց մրցույթի, 3 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրվել է 21,8 հա հողամաս՝ վճարի չափը սահմանելով հողի հարկի տարեկան դրույքաչափով: Սույն որոշմամբ՝ Սևանի իշխանի պաշարների վերականգման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրով կստեղծվի մանրածկերի բացթողման և վայրի պոպուլյացիայի ձևավորման մասնագիտացված կենտրոն (բազա), որտեղ հնարավոր կլինի վերահսկել պաշարների վերականգման բոլոր փուլերը, սկսած մանրածկան բացթողումից մինչև մայրական վտառի վերադարձ և մանրածկան վերարտադրություն,

որի արդյունքում այդ աշխատանքները կնպաստեն Սևանա լճում իշխանի պաշարների վերականգման գործընթացի առավել արդյունավետ իրականացմանը: Գործադիրը նաև որոշել է Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու տարածքում «Սևան ակվա» փակ բաժնետիրական ընկերությանը Սևանա լճում իշխանի պաշարների վերականգման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով առանց մրցույթի, 25 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել 1,9466 հա հողամաս՝ վճարի չափը սահմանելով հողի հարկի տարեկան դրույքաչափով: Նախատեսվում է Սևանի իշխանի պաշարների վերականգման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրով նախատեսված ձկան արտադրության արժեզրեայի օղակների գործունեության արդյունավետ կազմակերպումը, որի արդյունքում ձևավորված միջոցները կուղղվեն Սևանա լճի հիմնախնդիրների լուծմանը, և կնպաստեն Սևանա լճում իշխանի պաշարների վերականգմանը:

Ճահագրգիռ քննարկումներ Էկոլոգիական կրթության, դաստիարակության զարգացման ռազմավարության կառուցվածքի շուրջ



Ճահագրգիռ քննարկումներ Էկոլոգիական կրթության, դաստիարակության զարգացման ռազմավարության կառուցվածքի շուրջ

խնդիրների մեջ:

ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Վարդանյանը, շնորհակալություն հայտնելով ներկաներին քննարկման հրավերն ընդունելու համար, ներկայացրել է ռազմավարության կառուցվածքի նախնական տարբերակը, մշակվելիք միջոցառումների հիմնական սկզբունքները և թիրախները: Ա. Վարդանյանը պատասխանել է միջոցառման մասնակիցների հարցերին, ինչից հետո ծավալվել է շահագրգիռ քննարկում: Քննարկման մասնակիցները ներկայացրել են իրենց առաջարկները, որոնց զգալի մասը հաշվի կառնվի Էկոլոգիական կրթության, դաստիարակության զարգացման ռազմավարության կառուցվածքի և բուն ռազմավարության մշակման գործընթացում: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և փորձագետները հատկապես կարևորել են էկոկրթական խնդիրների լուծման գործընթացում ՀՀ կրթության և գիտության և բնապահպանության նախարարությունների արդյունավետ համագործակցությունը: Քննարկման մասնակիցներն առաջարկել են ռազմավարության մշակման ընթացքում պարբերաբար կազմակերպել նման քննարկումներ: ՀՀ բնապահպանության նախարարության պատասխանատուները հավաստիացրել են, որ Օրենքի նախագիծը մշակվում է Օրիուսի կոնվենցիայի և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և մշակված փաստաթուղթը կդրվի հանրային քննարկման:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում սահմանվել է պահպանության խստացված ռեժիմ



Հաշվի առնելով հանրապետության տարածքում առաջիկայում սպասվող բարձր ջերմային ֆոնը և հրդեհավտանգ իրավիճակը, 2017թ. հուլիսի 17-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը ստորագրել է հրաման, համաձայն որի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն և կառավարում իրականացնող ոչ պետական առևտրային կազմակերպությունների տնօրեններին հանձնարարվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում սահմանվել շուրջօրյա հերթապահություն՝ հրդեհների բռնկումները կանխարգելելու նպատակով: Հանձնարարվել է պետական ոչ առևտրային կազմակերպություններում առկա

հրդեհային կանխարգելիչ տեխնիկական միջոցները բերել առաջնային պատրաստվածության վիճակի և շուրջօրյա հերթապահության ընթացքում արձանագրված հրդեհների դեպքերի մասին անհապաղ տեղեկացնել նախարարին և համապատասխան պետական մարմիններին: ՀՀ բնապահպանության նախարարությունը միևնույն ժամանակ հանդես է եկել ազգաբնակչությանն ուղղված կոչով. զգուշություն ցուցաբերել՝ զերծ մնալով անտառածածկ և խոտածածկ տարածքներում կրակ վառելուց, ինչպես նաև ցորենի հնձած դաշտերում խոտի խոզանների այրումից:

Շաբաթվա ընթացքում կատարված խախտումները

Բնապահպանական պետական տեսչության կողմից 10.07-14.07.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 0,88 մլն. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 14 որոշում և հաշվարկվել 2,44 մլն. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 7 որոշում 350,0 հազ. դրամի և հաշվարկվել է 1012,37 մլն. դրամի շրջակա միջավայրին պատճառած վնաս, որից՝

Լոռու տարածքային բաժինն իրականացրել է վարչական վարույթ: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված անտառխախտման արձանագրությունների հիման վրա /ապօրինի ծառահատվել է 6 ծառ/ կայացվել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում և հաշվարկվել է 128,25 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Լոռու տարածքային բաժինն իրականացրել է վարչական վարույթ: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Դսեղի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված անտառխախտման արձանագրությունների հիման վրա /ապօրինի հատվել է 16 ծառ/ կայացվել է 200,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 4 որոշում և հաշվարկվել է 214,5 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժինն իրականացրել է վարչական վարույթ: «Դիլիջան ԱՊ» ՊՈԱԿ-ի կողմից կազմված անհայտ անձի կողմից ապօրինի ծառահատման /հատվել է 17 ծառ/ 1 դեպքի համար հաշվարկվել է 1866,91 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Գործն ուղարկվել է Տավուշի մարզի դատախազություն: Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման 1 դեպք: Իրավախախտը ենթարկվել է 50,0 հազ. դրամի չափով վարչական տուգանքի և հաշվարկվել է 72,0 հազ. դրամ գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Ապօրինի որսի իրականացման համար

Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում 100,0 հազ. դրամ գումարով.

Գեղարքունիքի տարածքային բաժինը «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ից ստացված խեցգետնի ապօրինի որսի փաստի



հիման վրա կազմվել է 2 արձանագրություն և կայացրել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում

Կազմվել է վարչական տուգանքի 3 որոշում՝ 300,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 162,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

Լոռու տարածքային բաժնի կողմից հայտնաբերված մեկ դեպքի համար իրավախախտի նկատմամբ կայացվել է 100,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 18,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Տավուշի տարածքային բաժինը ՀՀ ոստիկանության Իջևանի բաժնից ստացված ապօրինի փայտանյութի տեղափոխման 2 դեպքի համար կայացրել է 200,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 2 որոշում և հաշվարկվել է 144,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Մթնոլորտի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50,0 հազ. դրամ գումարով, որն է՝


Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված առանց անթափանց ծածկոցի խճի տեղափոխման 1 դեպքի համար մեկ ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության բացակայության համար կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 80,0 հազ. դրամի.

Գեղարքունիքի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերված 1 դեպքի համար իրավախախտի նկատմամբ կիրառվել է 80,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում:

Ընդհանուր առմամբ ԲՊՏ կիրառված պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0,97 մլն. դրամ:

Էկոմիջավայրի հոգսերը կերպարվեստի լեզվով



Հայաստանի նկարիչների միությունում հուլիսի 18-23-ը կգործի «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» խորագրով ցուցահանդեսը

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ
ԼԵԶՎՈՎ**

ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ

Բացումը՝ Հուլիսի 18-ին, ժամը 15:00-ին
Հայաստանի Նկարիչների Միություն



ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի շատ երկրներում էկոլոգիական թեմաներով ցուցահանդեսները վաղուց արդեն սովորական երևույթ են: Իսկ դա նշանակում է, որ արվեստը, մասնավորապես կերպարվեստը, ևս ակտիվորեն մասնակցում է հասարակության բնապահպանական գիտակցության և վարքագծի մշակմանն ու կատարելագործմանը: Կերպարվեստով մենք այսօր ունենք և առաջիկայում էլ ունենալու ենք հզոր զենք՝ հանրության էկոգիտակցությունը բարձրացնելու: Այս առումով ողջունելի է Հայաստանի նկարիչների միության անդրամիկ նախաձեռնությունը՝ մեր երկրի բնապահպանության խնդիրների մասին պատմող «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» խորագիրը կրող ցուցահանդեսի կազմակերպումը, որը տեղի կունենա հուլիսի 18-23-ը՝ Նկարիչների միության ցուցասրահում: Ցուցահանդեսի նպատակը ոչ մի-

այն բնապահպանական խնդիրները կերպարվեստի լեզվով արտահայտելն է, այլև ստեղծագործողներին ուղղորդել դեպի էկոմիջավայրի արդիական խնդիրների շարունակական արտացոլմանը՝ նպաստելով բնապահպանական մշակույթի և գիտակցության ձևավորմանը: Ցուցահանդեսին մասնակցելու հայտ կարող են ներկայացնել նրանք, ովքեր ստեղծագործում են գեղանկարի, գրաֆիկայի, քանդակի, գոբելենի, բատիկայի, խեցեգործության և մյուս ժանրերում: Ներկայացված աշխատանքներն ընտրելու նպատակով կստեղծվի հանձնաժողով՝ ՀՀ բնապահպանության, ՀՀ մշակույթի նախարարությունների, ինչպես նաև՝ Նկարիչների միության ներկայացուցիչներից: Ցուցահանդեսին մասնակցել ցանկացողները կարող են ցուցադրության թեմատիկ դրույթներին ծանոթանալ Նկարիչների միությունում:

Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517